ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2023 թվականի N 528 - Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022թ. փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 15-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Առողջապահության նախարարության 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N ՎԳ/05/29434-2023 գրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հաստատել՝ «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցույթային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 25
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023 թվականի դեկտեմբերի 25-ի
N 528 որոշման

ԿԱԶՄ

«Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցույթային հանձնաժողովի.

1.	Նարե Ղազարյան	Մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),
2.	Նունե Գևորգյան	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար),
3.	Գայանե Սարգսյան	Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ
4.	Ռոբերտ Կոստանդյան	Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ,
5.	Քրիստինա Գյուրջյան	Առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ (համաձայնությամբ),
6.	Հայկ Խուրշուդյան	Առողջապահության նախարարության ֆինանսա-տնտեսագիտական վարչություն ֆինանսաբյուջետային բաժնի պետ (համաձայնությամբ),
7.	Տիգրան Աստաբացյան	Առողջապահության նախարարության լիցենզավորման գործակալության դիտարկումների և վերլուծության բաժնի պետ (համաձայնությամբ):

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարին փոխարինող՝ Գ.Թադևոսյան